ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 դեկտեմբերի երեքշաբթի
2022տպագրության ԺԱ տարի

175
(2655)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 148

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019 թվականի փետրվարի 12-ին Ազգային ժողովում հայտարարել էր, որ լուծարված «Շիրակ» հանրային հեռուստաընկերության աշխատակիցները չեն կորցնի իրենց աշխատանքը, քանի որ կա ներդրող: Վարչապետը, մասնավորապես, նշել էր, որ կա պայմանավորվածություն ներդրողի հետ, եւ կառավարությունը «Շիրակ» հանրային հեռուստաընկերության ակտիվները կօտարի այդ ներդրողին, նա այդ աշխատատեղերը կպահպանի առնվազն առաջիկա մի քանի տարիներին: «Այդ մարդիկ առանց աշխատանքի չեն մնա՝ ըստ մեր պայմանավորվածության…»,- ասել էր Փաշինյանը: «Շիրակ» հանրային հեռուստաընկերությունում ներդրում չի կատարվել: «Փաստերի ստուգման հարթակ»-ի հարցմանն ի պատասխան՝ կառավարությունից հայտնեցին, որ ծրագրի քննարկման ժամանակ խնդիրներ են ծագել: ««Շիրակ» հանրային հեռուստաընկերությունում ներդրումային ծրագիր իրականացնելու հայտնի քննարկման ժամանակ ի հայտ են եկել այնպիսի իրավական եւ տեխնիկական խնդիրներ, այդ թվում՝ կապուղու հետ կապված, որոնք հնարավորություն չեն տվել իրականացնել ներդրումային ծրագիրը»,- նշված է պատասխանի մեջ: Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ թեեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019 թվականին հայտարարել էր, որ կա ներդրող, որին կօտարվեն «Շիրակ» հանրային հեռուստաընկերության ակտիվները, ներդրում փաստացի չի կատարվել, իսկ հեռուստաընկերության աշխատակիցները ազատվել են աշխատանքից: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանը, պարզվում է, նկարչությունից ու քրեական ենթամշակույթից զատ, նաեւ ֆուտբոլով է հետաքրքրվում: «Ժողովուրդ» օրաթերթը մոտ մեկ ամիս առաջ էր գրել, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի արվեստագետ սանիկը, ո՛չ ավել, ո՛չ պակաս, քրեական ենթամշակույթի առանձին ներկայացուցիչների հետ մտերմություն անում, հետաքրքրվում այդ աշխարհի անցուդարձով եւ այլն: Աժմ էլ, փաստորեն, սպորտի ոլորտում է փորձում քայլեր անել ու ամրապնդվել այդտեղ: «Ժողովուրդ» օրաթերթի սյունիքյան աղբյուրների փոխանցմամբ՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբով հենց Դանիելյանն է զբաղվում: Խոսակցություններ կան անգամ, որ ակումբը նրան է պատկանում: «ՔՊ-ական պատգամավորը «Կապան-Գանձասարի» բոլոր խաղերին ներկա է, ակումբի հետ կապված ցանկացած բան ինքն է որոշում, լուծում եւ այլն: Վարչապետ Փաշինյանի՝ դեռեւս 2018-ի հոկտեմբերին Կապանում արած հայտարարությունը մատի փաթաթան դարձած, թե ֆուտբոլը պետք է Կապան վերադառնա՝ հասել է նրան, որ գոծադիրն ամեն ամիս մոտ 8-9 մլն դրամ է փոխանցում ակումբին»,- «Ժողովուրդ» թերթին ասաց Սյունիքի մեր լավատեղյակ աղբյուրը: Թե ինչ վրձնահարվածով է նկարիչ պատգամավորը նաեւ ֆուտբոլի ասպարեզում հայտնվել, անձամբ նրանից փորձեցինք ճշտել: «Ես, այո՛, ակումբի բոլոր խաղերին հետեւում եմ, եւ, այո՛, գործադիրը, իմ տեղեկություններով, ֆինանսական օժանդակություն է տալիս ակումբին: Հուսանք՝ ակումբն այնքան կաճի, կզարգանա, որ որոշ ժամանակ անց պետական ֆինանսական աջակցության կարիք այլեւս չի ունենա: Ինչ վերաբերում է խոսակցություններին, թե ակումբն իմն է, ապա դրանք խոսակցություններ են, որ գոյություն կարող են ունենալ»,- փաստացի մեր լուրը հաստատելով՝ ասաց Դանիելյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանին մեղադրանք առաջադրելու համար խորհրդարան կգա ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: Մենք գրել էինք, որ նա հայտնվել է իրավապահների ուշադրության կենտրոնում քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով արած հայտարարությունների համար: Բանն այն է, որ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել կամ ազատությունից զրկել հնարավոր է միայն Ազգային ժողովով՝ դատախազի միջնորդության հիման վրա: Ընդ որում՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ: Հիշեցնենք, որ Գեղամ Մանուկյանը ԱԱԾ-ում հարցաքննվել էր քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով տարվող քրեական գործով, ինչը հենց Մանուկյանը հաստատել էր մեզ հետ զրույցում: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ ԱԱԾ-ում քրդերի՝ Թուրքիայում հայտնվելու առեղծվածային դեպքով քրեական գործ է հարուցվել, եւ բավականին խիստ է դրվել հարցը՝ պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկները հայտնվել Թուրքիայի ուժային կառույցներ մոտ: Հիշեցնենք նաեւ, որ երկու քրդերը Հայաստանում 2021 թվականի օգոստոսի 16-ին ապօրինի հատել էին Արաքս գետով անցնող՝ ՀՀ պահպանվող պետական սահմանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2022 թվականի հոկտեմբերի սկզբին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը դատարանի անդամների մոտ բարձրաձայնել է իր՝ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում հետագա պաշտոնավարման մասին հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հաստատեց մեր ունեցած տեղեկությունը եւ պարզաբանեց, թե ինչու է իր հրաժարականի մասին հարցը բարձրաձայնել: «Երբ ես ընտրվում էի Սահմանադրական դատարանի նախագահ, այդ ժամանակ իմ գործընկերներին հայտնեցի, որ երկու տարի հետո բարձրացնելու եմ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում իմ հետագա պաշտոնավարման մասին հարցը: Ես կատարեցի խոստումս եւ այս տարվա հոկտեմբերի սկզբին ՍԴ դատավորների մոտ բարձրացրի իմ հետագա պաշտոնավարման հարցը, թե արդյոք իմ կոլեգաները կողմ են, որ ես շարունակեմ մնալ ՍԴ նախագահ, թե ոչ», - մանրամասնեց նա: Արման Դիլանյանը նաեւ հայտնեց, որ իր գործընկերներից որեւէ առարկություն իր հետագա պաշտոնավարման մասով չի եղել, ուստի շարունակելու է իր՝ ՍԴ նախագահի պարտականությունները: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ այս տարվա հուլիսի 5-ին էր գրել, որ աշնանը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բարձրացնելու է իր հետագա պաշտոնավարման մասին հարցը:

ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՁԵՌԱՄԲ

ՎԱՆԱՁՈՐԸ ԴՈՓՈՒՄ Է ՏԵՂՈՒՄ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր, վանաձորցի Արմենուհի Կյուրեղյանն ասում է, որ իշխանությունը մի կողմից խոսում է ժողովրդավարության մասին, մյուս կողմից չի հարգում այն մի քանի հազար վանաձորցիների ընտրությունը, որով հանրապետության՝ մեծությամբ երրորդ քաղաքում իշխող «Քաղաքացիական պայմանագիրը» պարտվել է:

«Ընտրություններից մեկ տարի անց ընտրված ավագանին նիստ չի գումարել, ու այդտեղ մեծ մեղավորություն ունի «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանը»,- նշում է Կյուրեղյանը: Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ընդդիմադիր պատգամավորի հետ:

-Տիկին Կյուրեղյան, նախորդ տարվա դեկտեմբերի 5-ին Վանաձորում ընտրություններ տեղի ունեցան: Անցել է ուղիղ մեկ տարի, Վանաձորն առ այսօր չունի գործող համայնքի ղեկավար, ունի միայն պաշտոնակատար: Քաղաքական կամք է, դավադրությունների տեսությո՞ւն է, թե՞ մեկ այլ բան, որ Հայաստանի մեծությամբ երրորդ քաղաքը փաստացի ղեկավարվում է ոչ ընտրված քաղաքապետի կողմից:

-Գիտեք, այդ ամեն ինչը նախ ապացուցում է, որ այս իշխանությունները ոչ մի կերպ չեն կարողանում մեծությամբ երրորդ քաղաքում ունենալ ոչ գոնե իրեն հարող քաղաքապետ, եւ նրանք ամեն ինչ արեցին, որ այդ քաղաքապետի երդմնակալությունը տեղի չունենա: Եվ հենց դա է պատճառը, որ ավագանու առաջին նիստն անգամ տեղի չունեցավ, որի ժամանակ էլ պետք է քաղաքապետ ընտրվեր: Սա ապացուցում է միայն մի բան, որ այս իշխանություններն իսկապես եկել են բացասական առումով ժողովրդավարության հարցերը լուծելու եւ հայտարարելու ու հաստատելու երկրում բռնապետություն: Ի վերջո, այսօր Մամիկոն Ասլանյանն ինչո՞ւ դեռ քաղաքապետ չի ընտրվել. որովհետեւ նրան կալանավորել են չեղած մի քրեական գործով, որի ընթացքը վաղուց արդեն դադարել է: Նրանք ունեին 40 վկա, որոնցից ոչ մեկը Մամիկոն Ասլանյանի դեմ որեւէ փաստարկ չի ներկայացրել, եւ այս գործն առկախվել է: Դատելով այս ամենից՝ Մամիկոն Ասլանյանը կա՛մ պետք է ազատ արձակվի՝ ճանաչվելով անմեղ, կա՛մ պետք է դատվի: Երկու պարագայում էլ Մամիկոն Ասլանյանի մանդատը կգա գործածության մեջ նրա ձեռքում կամ այն մեկի, որ կգա նրանից հետո: Արդյունքում կունենանք 17 ընդդիմադիր եւ 16 ոչ ընդդիմադիր մանդատ: Երկու պարագայում էլ կընտրվի ընդդիմադիր դաշտից քաղաքապետ: Հենց սա էլ իրենք չեն կարողանում մարսել: Իսկ ի՞նչ արեցին իրենք Բերդի պարագայում. այնտեղ նույն բանը արեցին. երկարեց, երկարեց, առաջին անձին կալանավորեցին եւ երրորդ ընդդիմադիրը եկավ: Հիմա սա իրենց շատ խիստ է վախեցնում, քանի որ ի վերջո երրորդ քաղաքն է մեծությամբ Վանաձորը: Այս ամենին հասնելուն բացասական առումով նպաստել է Էդմոն Մարուքյանը՝ հանձնակատար-դեսպանը: Նա դատի տվեց, եւ առաջին նիստի կայացման ժամկետը հետաձգվեց, բողոքեց, բողոքեց, եւ նրա ձեռամբ ավագանու առաջին նիստը դեռ չի կայացել: Նրանք մտածում են, թե ժամանակավոր պաշտոնակատար նշանակելով՝ հարցը կլուծվի, բայց՝ ոչ: Քաղաքը չունի ղեկավար, եւ այն գործում է նախորդ տարվա ծրագրով. խուսել ժողովրդավարությունից եւ անտեսել վանաձորցիների ընտրությունը բռնապետության հաստատում է:

-Իսկ ի՞նչ վիճակում է Վանաձոր քաղաքը: Ի՞նչ կարող եք ասել՝ որպես այնտեղի բնակիչ:

-Կատարվում են այն բոլոր ծրագրերը, որոնք նախորդ ավագանին՝ մինչեւ այս ընտրությունները գործող, ընդունել է եւ աշխատել, այսինքն՝նույն Մամիկոն Ասլանյանի ղեկավարությամբ ընդունված քաղաքի բյուջեն է ծախսվում, եւ քաղաքի զարգացման ծրագիրն է իրականացվում: Եթե այսօր մաքուր է, նշանակում է՝ այն ժամանակ էլ է մաքուր եղել եւ գործել է: Երկու տարի առաջ վանաձորցիների խնդիրները եւ այսօր կարող էին փոխված լինել, սակայն երկու տարի է արդեն՝ վանաձորցին եւ Վանաձորը դոփում են նույն տեղում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻՆ

ԱՂԱՂԱԿՈՂ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ադրբեջանցիների կողմից Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի փակումը հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի էթնիկ ատելության, Արցախի շրջափակման Ադրբեջանի հանցավոր քաղաքականության, Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների աղաղակող խախտման հերթական դրսեւորումն է: Այս քայլով Ադրբեջանը փորձում է աստիճանաբար ընդհատել հայկական երկու հանրապետությունների միջեւ գործող ենթակառուցվածքը եւ առաջիկայում իրականացնել արցախահայության նոր ցեղասպանություն:

Միջազգային գործընկերներիս ուշադրությունն եմ հրավիրում Ադրբեջանի այս անօրինական, մարդու հիմնարար՝կյանքի, առողջության, ազատության եւ մյուս համընդհանուր իրավունքները ոտնահարող վարքագծի վրա: Ադրբեջանցիները, Արցախը սնուցող միակ ճանապարհը փակելով, արգելափակել են բժշկական պարագաների եւ դեղամիջոցների տեղափոխումը Արցախ, առողջական ծանր խնդիրներ ունեցող հիվանդներին հնարավոր չի եղել այդ ողջ ընթացքում Արցախից հասցնել Հայաստան անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու համար:

Այս անօրինական գործողությունից 2 օր առաջ միջազգային օղակների ուշադրությունն էի հրավիրել վերջին օրերին Ադրբեջանի հանցավոր գործողությունների վրա, ընդգծել հայ ժողովրդի հիմնարար իրավունքները ոտնահարող Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու անհրաժեշտությունը, այլապես միջազգային հանրության անպատժելիության պայմաններում Ադրբեջանը կդիմի նոր հանցագործությունների:

Միջազգային գործընկերներիս ահազանգում եմ՝ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի փակումը Ադրբեջանի հերթական հանցագործությունների ընդամենը սկիզբն է: Ադրբեջանը առաջիկայում ձգտելու է Արցախում ստեղծել հումանիտար աղետ, որպեսզի կյանքի կոչի իր ցեղասպանական ծրագրերը, զրկի արցախահայությանը իրենց հայրենիքում խաղաղ կյանք վարելու իրավունքից եւ հայաթափի Արցախը:

Իսկ թուրքի հետ խաղաղության օրակարգին հավատարիմ, Արցախի հարցում նշաձողը իջեցրած, ԼՂ հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգի հիմքում անվտանգության երաշխիքներն ու իրավունքները դրած Փաշինյանի իշխանությունը համառորեն լռում է»:

ԱՆՕԳՈՒՏ ԿԱՌՈՒՅՑ

Չնայած ՀՀ կառավարությանը ենթակա Միջուկային անվտանգության կոմիտեն անգամ նախագահ չունի, սակայն մեկ անձից գնումներում բավականին ակտիվ է: Օրինակ՝ «ՎԻՆՈ-ՎԻՆՈ» ՍՊԸ-ի հետ կոմիտեն պայմանագիր է կնքել 184.500 դրամի չափով՝ներկայացուցչական ծախսերի համար: Պայմանագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կոմիտեն այդ ՍՊԸ-ից 124 հազար 500 դրամ արժողությամբ «Ախթամար» եւ 60 հազար դրամ արժողությամբ «Արարատ» կոնյակներ է գնել: Եվս 80 հազար դրամի պայմանագիր կոմիտեն կնքել է «Կարեն Ռեզյան» ԱՁ-ի հետ՝ ավտոմեքենաների պահպանման ծառայությունների համար: Նույն ՍՊԸ-ի հետ նույն նպատակով կոմիտեն նաեւ 91 հազար դրամ արժողությամբ է պայմանագիր կնքել: Համակարգչային սարքերի պահպանման եւ վերանորոգման համար կոմիտեն միանգամից երկու ՍՊԸ-ից է մեկ անձից գնում կատարել՝ 28 եւ 365 հազար դրամ արժողությամբ պայմանագրեր կնքելով: Իսկ ինչո՞վ է զբաղվում ՀՀ կառավարությանը ենթակա Միջուկային անվտանգության կոմիտեն: Ինչպես արդեն նշեցինք, այն անգամ նախագահ չունի: Ամեն դեպքում, կառավարության պաշտոնական կայքում այդ տվյալները բացակայում են, եւ նշված է միայն առաջին տեղակալի եւ տեղակալի անունները: Ավելին՝ անգամ կոմիտեի պաշտոնական կայքն է գտնվում անմխիթար վիճակում, եւ որեւէ այլ տեղեկություն կամ կոմիտեի գործունեության մասին տվյալներ ուղղակի անհնար է գտնել: Մինչ այդ նկատենք՝ «Նկարագրություններ» բաժնում նշված է, թե Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորումը բնակչության եւ անձնակազմի անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության եւ ՀՀ անվտանգության պաշտպանության նպատակներով: Այսինքն՝ իրականում կարեւոր գործառույթներ են, սակայն կոմիտեն ոչ միայն նախագահ, պաշտոնական կայք չունի, այլեւ անհասկանալի գործունեության համար կասկածելի գնումներ է անում:

ԹԵԺ Է ԱՆՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝այս հանգստյան օրերին դատավորների եւ ԲԴԽ նախագահի հետ հանդիպումն առանց թեժ խոսակցությունների չի անցել:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քաղաքացիական գործերով որոշ դատավորներ ԲԴԽ նախագահին առանձին են կանչել հարց ու պատասխանի ու թեժ զրույց ունեցել: Թե ովքեր են եղել այդ դատավորները, փորձեցինք անձամբ պարզել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանից: Ի պատասխան՝ ԲԴԽ-ից հայտնեցին, թե բամբասանքները չեն մեկնաբանում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ այս շաբաթվա վերջին օրերին Հայաստանի դատական համակարգի ներկայացուցիչները էլի կհավաքվեն Դիլիջանում: Գրել էինք, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը հանդիպումների շարք է սկսել դատավորների հետ՝ քննարկելու համակարգում առկա խնդիրները:

ԱԺ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Այսօր կմեկնարկի ԱԺ նստաշրջանը. ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված են 16 հիմնական եւ 7 լրացուցիչ հարցեր:

16 հիմնական նախագծերից 14-ը երկրորդ ընթերցում են անցնելու, այսինքն՝ միայն երկու նախագիծ է առաջին եւ երկրորդ ընթերցում անցնելու: Խորհրդարանում կշարունակվեն Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին նախագծի քննարկումները: Կառավարության անդամները կգան խորհրդարան՝ այդ քննարկումներին մասնակցելու համար: Նրանք նաեւ խորհրդարանում կլինեն չորեքշաբթի օրերին եւ կպատասխանեն պատգամավորների հարցերին:

Առաջին եւ երկրորդ ընթերցում կանցնի կառավարության կողմից ներկայացված ««Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Այս փոփոխությունն ընդունվելու պարագայում 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը դադարեցվում է սույն օրենքով նախատեսված անձնագրերի տրամադրումը (փոխանակումը): Մինչեւ 2023 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն տրամադրված անձնագրերը համարվում են վավեր:

ՄՈՍԿՎԱ՝ ԵՌՕՐՅԱ ԱՅՑՈՎ

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորած պատվիրակությունը եռօրյա այցով Մոսկվա կմեկնի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վարդապետյանի հետ մեկտեղ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք կմեկնեն դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանը, դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ Եղիազար Ավագյանն ու դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը:

Տեղեկացանք, որ այցի նպատակն է խորացնել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունների միջեւ համագործակցությունը, ինչպես նաեւ ընթացիկ հարցերին անդրադառնալը:

Գործուղումը, որի հետ կապված ծախսերը ՀՀ պետբյուջեից են կատարվելու, 2022 թվականի դեկտեմբերի 7-10-ը կտեւի:

ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ՆԻՍՏ

Էկոնոմիկայի նախարարությունն ընդամենը մեկ նիստ անցկացնելու համար կառավարությունից ավելի քան 1 միլիոն դրամի հաշվետվություն է ներկայացրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ուղիղ մեկ ամիս առաջ՝ նոյեմբերի 3-4-ը, Երեւանում կայացած հայ-ղրղզական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստ կազմակերպելու համար Էկոնոմիկայի նախարարությունը կառավարությանը հայտնել է, որ 1.116.130 դրամ է ծախսել:

Եվ այժմ, ըստ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշման, ներկայացված գումարը պետբյուջեից է դուրս գրվելու:

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ ՉԻ ԸՆՏՐԵԼ

Վանաձորի ընտրություններից ուղիղ մեկ տարի է անցել, բայց առ այսօր քաղաքի ավագանին նիստ չի արել ու համայնքապետ չի ընտրել: Թեեւ քաղաքը կառավարության կողմից նշանակված պաշտոնակատարի կառավարմանն է հանձնվել, բայց, առանց գործող ավագանու, հանրապետության՝ մեծությամբ երրորդ քաղաքը չի կարող լիարժեք կառավարվել:

Նախ՝ ավագանին պետք է համայնքապետ ընտրի, ապա քաղաքի բյուջեն հաստատի, խոշորացված համայնքերում ներկայացուցիչներ նշանակի եւ այլն: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ավագանու արտահերթ մի քանի նիստեր հրավիրել է, ինչը, սակայն, «Մամիկոն Ասլանյան» դաշինքն ու «Հայրենիք» խմբակցությունը բոյկոտել են՝ պատճառաբանելով, որ նախքան ավագանու արտահերթ նիստ գումարելը պետք է համայնքապետի ընտրության օրակարգով նիստ գումարել ու համայնքը ձեւավորել:

«Հայրենիք» խմբակցության անդամ Վահե Դոխոյանն ArmLur.am-ի հետ զրույցում ավելի վաղ հայտնել էր՝ համայնքը ձեւավորված է համարվում այն ժամանակ, երբ բնակիչը՝ ավագանի, ավագանին համայնքի ղեկավար է ընտրում, ու ընտրված ղեկավարն ավագանու հետ մեկտեղ ձեւավորում է պատասխանատու կաբինետը, այդ թվում խոշորացված համայնքի բնակավայրերի պատասխանատուներն են նշանակվում, որոնք էլ ներկայացնում են գյուղական կամ համայնքային կարիքները: Ավագանու առաջին նիստը կկայանա միայն այն դեպքում, երբ դատարանը հանի նիստ գումարելու արգելքը:

Նշենք, որ Վանաձորի ավագանու ընտրություններին մասնակցած ու անցողիկ շեմը չհատած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը դատարանում բողոքարկել է ընտրության արդյունքները, ինչից հետո է վարչական դատարանն արգելանք կիրառել: Ու թեեւ վարչական ու վերաքննիչ դատարանները հայցը մերժել էին, ԼՀԿ-ի բողոքն այժմ Վճռաբեկում է:

Վանաձորի ավագանու ընտրություններում ձայների մեծամասնությունը ստացած «Մամիկոն Ասլանյան» դաշինքը գլխավորող Մամիկոն Ասլանյանն այժմ անազատության մեջ է: Նա մեղադրվում է պաշտոնեական դիրքը չարաշահելու համար, քրեական գործն այժմ Հակակոռուպցիոն դատարանում է քննվում: Ինքն իրեն Ասլանյանը քաղաքական բանտարկյալ է համարում: Ինչ վերաբերում է քաղաքը ղեկավարող պաշտոնակատար Արկադի Փելեշյանին, ապա նրա հետ կապված տարաբնույթ շատ պատմություններ կան: Վարչապետ Փաշինյանին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը տարիներ առաջ ամենատարբեր բնորոշումներ է տվել նրան, այսօր փաստացի, Փաշինյանի հրամանով, նա քաղաք է ղեկավարում: Ինչ է ստացվում. Վանաձորի ՏԻՄ ընտրություններից ուղիղ մեկ տարի անց ՀՀ երրորդ քաղաքն ավագանու կողմից ընտրված համայնքապետ չունի, քանի որ, ըստ երեւույթին, քաղաքական իշխանությունը չի հաշտվում ընտրության արդյունքների հետ ու ջանում է անել հնարավորը՝ այստեղ նույնպես իշխանություն վերցնելու համար:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումները վարժանքներ են սկսել երկրի հարավային սահմանների մոտ: Զորավարժություններն անցկացվում են՝ 2022 թվականի մարտական պատրաստության պլանի համաձայն. դրանք ղեկավարում է հատուկ նշանակության ուժերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հիքմեթ Միրզաեւը:

Ադրբեջանական ԶԼՄ-ները գրում են, որ զորավարժությունների հետագա փուլերում հատուկ նշանակության ստորաբաժանումները կկատարեն մի շարք առաջադրանքներ՝ համագործակցելով իրենց աջակցող ռազմաօդային ուժերի եւ հրթիռային եւ հրետանային զորքերի ստորաբաժանումների հետ: Զորավարժությունները, որոնք անցկացվում են տարբեր տիպի զորքերի անձնակազմի, ռազմական եւ հատուկ ինժեներա-սակրավորային տեխնիկայի, ինչպես նաեւ ադրբեջանական բանակի եւ Թուրքիայի զինված ուժերի ռազմական ավիացիայի ներգրավմամբ, ընդգրկում են Բաքու քաղաքի, Աստարայի, օկուպացված Ջրականի (Ջաբրայիլ) եւ Իմիշլիի շրջանների տարածքները:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի վերջին Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը լայնածավալ զորավարժություններ է անցկացրել Ադրբեջանի հետ սահմանին:

ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՉԻ ՀԱՋՈՂՎԵԼ

Անհրաժեշտ է ստորագրել ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի որոշման նախագիծ՝ Հայաստանին օգնություն տրամադրելու միջոցառումների մասին: Այս մասին երկուշաբթի օրը Մոսկվայում ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի նիստում հայտարարել է գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը:

Զասը հիշեցրել է, որ պետությունների ղեկավարների հանձնարարությամբ Հայաստանում մշակվել է դիտորդական առաքելություն՝ գլխավոր քարտուղարի եւ ՀԱՊԿ օպերատիվ շտաբի ղեկավարի գլխավորությամբ:

Այս աշխատանքի արդյունքներով պատրաստվել է Հայաստանին օգնություն տրամադրելու համատեղ միջոցառումների մասին Հավաքական անվտանգության խորհրդի որոշման նախագիծ, որը քննարկվել է խորհրդի նոյեմբերի 23-ի նիստում. «ՀԱՊԿ պետությունների տարբեր դիրքորոշումների պատճառով այս նախագիծն ընդունել չի հաջողվել: Հուսով եմ, որ որոշակի վերանայումից հետո կհասնենք այս որոշման նախագծի ստորագրմանը եւ այդ միջոցների ընդունմանը: Վստահ եմ, որ դա պետք է, այդ թվում՝ Հայաստանին»:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը, ամփոփելով Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, դեսպան Ֆիլիպ Ռիքերի այցը տարածաշրջան, հիշեցնում է, որ Ռիքերը հանդիպել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանին:

Քննարկվել են տարածաշրջանի հիմնահարցերը եւ ԱՄՆ աջակցությունը չկարգավորված խնդիրների կառուցողական լուծման նպատակով Հայաստանի եւ Ադրբեջանի ուղիղ ներգրավման հարցում:

Դեսպան Ռիքերն ընդգծել է, որ Միացյալ Նահանգներն հանձնառու է անվտանգ, կայուն, ժողովրդավար, բարեկեցիկ ու խաղաղ ապագայի խթանմանը Հարավային Կովկասում:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ

Ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կինը՝ Ս.Գ.-ն (Ս.Ս.), միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտներ վերացնելով, օժանդակել է պաշտոնատար անձ, իր հետ ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Վ.Գ.-ին, որը, պաշտոնական դիրքն օգտագործելով, 2000-2010 թվականների ընթացքում վատնման եղանակով հափշտակել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույք:

Մասնավորապես, Ս.Գ.-ն 2000 թվականի մայիսի 11-ից մինչեւ 2008 թվականի հուլիսի 24-ը զբաղեցրել է ՊՆ ռազմական ոստիկանության վարչության՝զորամասն ինքնակամ լքած զինծառայողների եւ դասալիքների դեմ պայքարի բաժնի վերլուծության խմբի պետի, 2008 թվականի հուլիսի 24-ից մինչեւ 2010 թվականի հուլիսի 1-ը՝ նույն բաժնի ավագ սպայի, 2010 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2011 թվականի նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում՝զորամասն ինքնակամ լքած զինծառայողների եւ դասալքության դեմ պայքարի բաժանմունքի ավագ սպայի պաշտոնները, այնուհետեւ տեղափոխվել է ոստիկանության կադրերի վարչության տրամադրության տակ: Վ.Գ.-ն, տեղյակ լինելով, որ իր հետ ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Ս.Գ.-ն ավելի քան տասնմեկ տարի՝ 2000 թվականի մայիսից մինչեւ 2011 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ծառայության չի ներկայացել եւ պաշտոնից բխող ծառայողական պարտականությունները երբեւէ չի կատարել, ոչ միայն չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, այլեւ 2000-2010 թվականների ընթացքում ստորագրել է Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծերը, Ֆինանսների նախարարության գանձապետարան ուղարկվող կամ գանձապետական ծրագիր մուտքագրվող փոխանցագրերը, որոնցում ընդգրկված են եղել նաեւ Ս.Գ.-ի տվյալները: Արդյունքում հիշյալ ժամանակահատվածում Ս.Գ.-ին որպես աշխատավարձ եւ դրամական այլ բավարարումներ փաստացի վճարվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 17 մլն 275 հազար 721 դրամ: Մեկ այլ դեպքով Ս.Գ.-ն, 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 11-ը հանդիսանալով ոստիկանության պետի աշխատակազմի ոստիկանության պետի ավագ ռեֆերենտ, պաշտոնին նշանակվելուց ի վեր պարբերաբար ծառայության չի ներկայացել եւ ոչ պատշաճ է կատարել իր ծառայողական պարտականությունները, ավելին՝ առանց վերադասին ուղղված՝ իրեն արձակուրդ տալու մասին զեկուցագրերի եւ դրանց հիման վրա արձակուրդ տրամադրելու վերաբերյալ հրամանների, մի շարք դեպքերում տարբեր տեւողություններով բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, որով պայմանավորված՝ չի ներկայացել ծառայության: Այս պայմաններում, 2011 թվականի դեկտեմբերի 30-ի եւ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի հրամաններով, նրան շնորհվել են «փոխգնդապետ», ապա՝ «գնդապետ» հատուկ կոչումները, ապա նաեւ նրա անվամբ փոխանցվել է 19 մլն 422 հազար 319 դրամ գումար: Իր հերթին Վ.Գ.-ն, լավատեղյակ լինելով կնոջ՝ Ս.Գ.-ի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ծառայության չներկայանալու եւ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով ոչ պատշաճ կատարելու մասին, կնոջը կարգապահական խախտման համար կարգապահական տույժի չենթարկելու, այդ թվում՝ ոստիկանությունից չազատելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնեական դիրքը դիտավորյալ օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ժամանակին չի հայտնաբերել ենթակայի՝Ս.Գ.-ի կատարած կարգապահական խախտումների պատճառները, չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, ավելին՝ վերջինիս կողմից պարբերաբար ծառայության չներկայանալու եւ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով ոչ պատշաճ կատարելու պայմաններում 2011 թվականի դեկտեմբերի 30-ի եւ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի հրամաններով նրան շնորհել է «փոխգնդապետ», ապա՝ «գնդապետ» հատուկ կոչումները, ինչպես նաեւ նրա անվամբ փոխանցել է 19 մլն 422 հազար 319 դրամ գումար: Այսպիսով, Ս.Գ.-ն Վ.Գ.-ի հետ խմբի կազմում, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է պաշտոնեական դիրքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Վերը նշված հանցանքները կատարելու համար 2022 թվականի դեկտեմբերի 3-ին որոշում է կայացվել Ս.Գ.-ի նկատմամբ արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին. մեղադրանք ներկայացնելու եւ խափանման միջոց ընտրելու համար որոշումն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐԶՎՈՒՄ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ Երեւան-Գյումրի ավտոճանապարհին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախնական տվյալներով՝2022 թվականի դեկտեմբերի 4-ին՝ ժամը 23:20-ի սահմաններում, Կարբի գյուղի 33-ամյա բնակիչը, վարելով «Վազ 2106» մակնիշի ավտոմեքենան, Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 23-րդ կիլոմետրին դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ բախվել ճամփեզրի արգելապատնեշներին, որի հետեւանքով վերջինս եւ նրա 22 եւ 3-ամյա ուղեւորները տեղում մահացել են: Նախաքննությունը շարունակվում է, քրեական վարույթով նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

ԳՈՂՈՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Դեկտեմբերի 2-ին ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ նոյեմբերի 30-ի ժամը 07.00-ից ժամը 17.00-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի մուտք են գործել Երկաթուղայինների 5-րդ նրբանցքի իր տուն եւ գողացել ոսկյա մատանիներ ու պահածո:

Ոստիկանությունից հայտնում են, որ Կապանի ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունն արել է տուժողի հարեւանի 19-ամյա որդին:

19-ամյա երիտասարդը ձերբակալվել, տեղափոխվել է բաժին, որտեղ խոստովանել է, որ հարեւանի տնից ինքն է գողություն արել: Գողոնը հայտնաբերվել է: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Սյունիքի մարզի քննչական վարչություն:

ԽԱԽՏԵԼ ԵՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Դեկտեմբերի 4-ին՝ ժամը 00:25-ին, ոստիկանության պարեկային ծառայության գնդի 3-րդ գումարտակի 1-ին վաշտի ծառայողները մայրաքաղաքի Պարոնյան փողոցում հայտնաբերել, խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել յոթ երիտասարդների:

Նրանք, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ եւ խախտելով հասարակական կարգը, վիճաբանում եւ հարվածներ էին հասցնում իրար: Նախապատրաստված նյութերը փոխանցվել են քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

ԿԱ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ

Դեկտեմբերի 4-ին՝ ժամը 18:54-ին, Վայոց ձորի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Վայք-Եղեգնաձոր ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ, բախվել են ավտոմեքենաներ, կա արգելափակված քաղաքացի. այս մասին հայտնում են ՀՀ ԱԻՆ-ից: Պարզվել է, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 124-րդ կմ-ին բախվել են «Opel» (վարորդ՝Հ. Բ., ծնված 1958 թ.) եւ «VAZ-2105» (վարորդ՝ Ա. Ա., ծնված 1974 թ.) մակնիշների ավտոմեքենաները: Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը «Opel» մակնիշի ավտոմեքենայի վարորդը հոսպիտալացվել է Եղեգնաձոր քաղաքի ԲԿ, որտեղ բժիշկները վերջինիս առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության. ստանալով համապատասխան բուժօգնություն՝ տեղափոխվել է «Էրեբունի» ԲԿ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

Իրավապահները մեկը մյուսի հետեւից մեղադրանք են առաջադրում սեպտեմբերի 13-ին եւ 14-ին տեղի ունեցած պատերազմի դեպքերով: Նկատում ենք, որ իրավապահները հիմնականում մեղադրանք են առաջադրում Ջերմուկում ծառայություն իրականացրած հրամանատարներին, որոնք հրաժարվել են կոնկրետ գործողություն իրականացնել: Այսպիսով, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գուրգեն Սահակյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, լինելով ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային գումարտակի պայթուցիկ սարքերի վնասազերծման վաշտի պայթուցիկ սարքերի վնասազերծման դասակի 1-ին պայթուցիկ սարքերի վնասազերծման ջոկի հրամանատար-օպերատոր, պայմանագրային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, 2022 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից նախաձեռնված եւ իրականացված ագրեսիայի ընթացքում, 2022 թվականի սեպտեմբերի 15- ին,ստորաբաժանման կազմում ժամանելով Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաք եւ վերադաս հրամանատարության կողմից առաջադրված խնդիրների շրջանակում պարտավոր լինելով ստորաբաժանման կազմում ընդգրկվել մարտական հերթապահության ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում, ստորաբաժանման կողմից առաջադրված խնդիր կատարմանը ձեռնամուխ լինելու ընթացքում, տեղեկանալով առաջադրանքի բովանդակության մասին, ի սկզբանե, դիտավորյալ, բացահայտ հրաժարվել է այդ զինվորական ծառայության առանձին պարտականությունը կատարելուց. վերադաս հրամանատարությանը հայտնել է, որ Ջերմուկ քաղաքից չի մեկնի մարտական հերթապահության տեղամաս եւ չի ստանձի ստորաբաժանման առջեւ դրված մարտական առաջադրանքով պայմանավորված պարտավորությունները, որը զուգորդվել է դրանց փաստացի կատարմամբ. Գ. Սահակյանը մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 19-ը՝ ժամը 11:20-ը, գտնվել է Ջերմուկ քաղաքում՝ ստորաբաժանման ժամանակավոր տեղակայման վայրում, ստորաբաժանման անձնակազմի հետ չի գնացել պահպանության տեղամաս, տվյալ տեղանքում չի իրականացրել մարտական հերթապահություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 2-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 135 դեպք, որոնցից 8-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱԿՎԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

«Իրական դպրոց» կրթամշակութային հիմնադրամը հիմնադրվել է 2016 թ-ին Երեւանում: 2018 թ. սեպտեմբերին «Իրական դպրոցը» մասնաճյուղեր է բացել Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում, իսկ 2019-ին՝նաեւ Գորիս քաղաքում, 2021 թ.-ին՝Իջեւանում: Հիմնադրամն իրականացնում է «Համակարգերի տեսություն» մասնագիտությամբ քառամյա ուսումնական ծրագիր, ծրագրին մասնակցում են 9-րդ դասարանն ավատած աշակերտներ: Ուսումնական ծրագիրն իրականացվում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) եւ «Ինստիգեյթ ուսումնական կենտրոն» հիմնադրամի կողմից՝ Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության համագործակցությամբ: Իջեւանում գործող «Իրական դպրոցի» աշակերտների ծնողները «Իրական դպրոց» կրթամշակութային հիմնադրամի տնօրեն Վահագն Պողոսյանից ծանուցագիր են ստացել, որ ՊԵԿ-ը վարույթ է սկսել «Իրական դպրոց» հիմնադրամի նկատմամբ, որ հիմնադրամը Հայաստանի մարզերում ուսուցում իրականացնելու հավաստագիր չունի, ուստի պետք է նոյեմբերի 28-ից մարզերում դադարեցնի ուսուցումը: Իջեւանի «Իրական դպրոցում» ուսուցումը տարվում է գրաբարով, մեծ տեղ է տրվում ազգային ոգու սերմանմանը, աշակերտների էքսկուրսիաներին եւ այլն: Նախատեսվում է, որ դեկտեմբերի 5-ին Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն, «Իրական դպրոց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Տավուշի նախկին մարզպետ Հայկ Չոբանյանը Իջեւան քաղաքում հանդիպում կունենա «Իրական դպրոցում» սովորողների ծնողների հետ, որտեղ կքննարկվի վերոհիշյալ խնդիրը: «Իրական դպրոցի» աշակերտների ծնողները նախատեսում են առաջիկայում Երեւանում, ԿԳՄՍ նախարարության շենքի մոտ բողոքի ակցիա անել:

«ՋՐԵԼ ԵՆ» ԱՎՏՈՎԹԱՐԻ ԳՈՐԾԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, 2021թ. ապրիլի 8-ին Նիկոլ Փաշինյանի որոշումով Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝նրան մասնավորապես հարցնելով. «Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշյանը 2022թ. հոկտեմբերի 23-ին՝ժամը 16:40-ի սահմաններում, Nissan մակնիշի 550 LL 60 համարանիշի ավտոմեքենայով Երեւանի Ռուբինյանց փողոցում վրաերթի է ենթարկել մի երիտասարդի: Կիրակի՝ ոչ աշխատանքային օրը, ծառայողական ավտոմեքենայով Նարեկ Ղուշչյանն իր պաշտոնի հետ կապված ի՞նչ գործ ուներ Երեւանում: Այդ վթարի հետ կապված Նարեկ Ղուշչյանը ենթարկվե՞լ է կարգապահական տույժի»: Մարզպետի փոխարինող տեղակալ Ֆելիքս Ափինյանի ստորագրությամբ մարզպետարանից դեկտեմբերի 2-ին պատասխան է ստացվել, ուր նշված է. «ՀՀ մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշյանը 2022 թվականի հոկտեմբերի 23-ին Երեւանում հանդիպում է ունեցել մասնավոր ներդրողի հետ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

ՍԱԴՐԱՆՔԻ ԵՐԿՈՒ ԴԵՊՔ

2022 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում ոստիկանության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների Հերթապահ մասերում հանցագործությունների, իրավախախտումների եւ դատահարների վերաբերյալ գրանցվել է 47 հաղորդում՝ նախորդ շաբաթվա 73-ի փոխարեն: Նվազել է ինչպես հաղորդումների, այնպես էլ իրավախախտումների նկարագիրը:

Ստացված հաղորդումներից 30-ը հանցագործության մասին է, դրանք բոլորը բացահայտվել եւ քննության փուլում են. հայտնում են Արցախի ներքին գործերի նախարարությունից:

Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու վերաբերյալ գրանցվել է 3 դեպք: Շրջակա միջավայրի պահպանության եւ ապօրինի անտառահատումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքում՝ ոստիկանության ծառայողների կողմից բացահայտվել է ապօրինի ծառահատման 1 դեպք:

Մեկ շաբաթվա ընթացքում բացահայտվել է նախկինում կատարված 1 հանցագործություն:

Քրեական հետախուզության վարչության եւ տարածքային ստորաբաժանումների ծառայողների համատեղ իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է շրջանառությունն արգելված թմրամիջոցների 2 դեպք:

Շաբաթվա ընթացքում Ադրբեջանի կողմից Արցախի քաղաքացիական բնակչության դեմ ուղղված սադրանքի 2 դեպք է գրանցվել Շուշիի եւ Մարտակերտի շրջաններում:

Դեկտեմբերի 3-ին Շուշի-Քարին տակ խաչմերուկի հատվածում քաղաքացիական հագուստներով մի խումբ ադրբեջանցիներ բնապահպանական պատճառաբանությամբ փակել են Ստեփանակերտ-Գորիս մայրուղին: Ընդհատվել է Հայաստանի եւ Արցախի միջեւ ցամաքային կապը: Ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը եւ Արցախի լիազոր պետական մարմինները ձեռնարկել են բոլոր հնարավոր միջոցները իրավիճակի կարգավորման ուղղությամբ. ավելի քան երեք ժամ տեւած բանակցություններից հետո ճանապարհը բացվել է:

Դեկտեմբերի 4-ին ադրբեջանցիները սադրանքի են դիմել Մատաղիս-Քարվաճառ երթուղու Գետավան համայնքի տարածքում՝ հանգեցնելով քաշքշուկի:

Շարասյունը տեխնիկական նպատակներով կանգնել է Գետավանի տարածքում, որտեղ քաղաքացիական հագուստով 4 ադրբեջանցի իջել են մարդատար ավտոմեքենայից եւ ակնհայտ սանձարձակ ու սադրիչ վարք դրսեւորել տեղի երիտասարդների հետ, որի ընթացքում կողմերը քաշքշել են միմյանց: Միջադեպի մասնակիցները ստացել են թեթեւ մարմնական վնասվածքներ: Արցախի Հանրապետության ոստիկանությունը հանգամանքները պարզել ու փաստերը ներկայացրել է ՌԴ խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը:

Ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցված հաղորդումների տվյալներով՝ 7 օրվա ընթացքում գրանցվել է ճանապարհատրանսպորտային 30 պատահար, այդ թվում՝ 3-ը վրաերթի ելքով:

Պատահարներից 24-ը նյութական վնասով է, 6-ը՝ մարմնական: Տրանսպորտային պատահարներից բուժհաստատություն է դիմել 6 քաղաքացի:

Ճանապարհապարեկային ծառայողների կողմից բացահայտվել է առանց վարորդական վկայականի տրանսպորտային միջոց շահագործելու 13 դեպք, 17 վարորդ եղել է անսթափ վիճակում, 195-ը՝ գերազանցել է սահմանված արագությունը:

Հանցագործությունների բացահայտման եւ դրանց կանխարգելման նպատակով ոստիկանությունը 24 ժամ շարունակ ծառայություն է իրականացնում Արցախի ողջ տարածքում՝ մշտապես համագործակցելով ինչպես Արցախի, այնպես էլ ՀՀ իրավապահ կառույցների հետ:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ՈՒ ՆՊԱՍՏՆԵՐ

ՎՃԱՐՄԱՆ ՆՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

2023 թ. փետրվարի 1-ից 1000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքներում նոր նշանակվող նպաստները կվճարվեն անկանխիկ եղանակով, իսկ մինչեւ 1000 բնակիչ ունեցող համայնքների դեպքում՝ 2023 թ. հուլիսի 1-ից: Ներկայացնելով ընտանեկան նպաստի վճարման գործընթացում առաջարկվող կարգավորումները, ԱԺ մամուլի ծառայության փոխանցմամբ, նշել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը:

Արդեն հաստատված եւ նշանակված վճարվող ընտանեկան նպաստների դեպքում պարտադիր անկանխիկին անցման մեկնարկը քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում կտրվի հուլիսի 1-ից, իսկ մինչեւ 1000 բնակիչ ունեցողների դեպքում՝ 2024 թ. հունվարի 1-ից: 2024 թ. հունվարի 1-ից կենսաթոշակներն ու նպաստները կունենան անկանխիկ վճարման ժամանակացուցային նույն ընթացակարգը:

Հաջորդ փոփոխությունները վերաբերում են կենսաթոշակների վճարմանը: Գործող կարգավորումներով անկանխիկի վճարման երկու տարբերակ է գործում. վճարումն իրականացվում է բանկերի կողմից եւ Հայփոստի էլեկտրոնային փողի հաշվի միջոցով, որը հիմնականում կանխիկացվում էր շահառուների կողմից: 2023 թ. փետրվարի 1-ից սոցիալական հաշվի հիման վրա բացված էլեկտրոնային փողի հաշվի միջոցով այլեւս կանխիկացում հնարավոր չի լինելու իրականացնել, ուստի առաջարկվում է 2023 թ. փետրվարի 1-ից հետո Հայփոստի էլեկտրոնային փողի հաշիվների գործարքները փոխանցել բանկերին, այսինքն՝ վճարումը կիրականացվի բանկային քարտի միջոցով:

Հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի հստակեցնող հարցին ի պատասխան՝փոխնախարարը պարզաբանել է, որ մինչեւ 2023 թ. փետրվարի 1-ը նշանակված բոլոր դիմումներն ու նպաստները կտրվեն անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ ըստ նպաստառուի ցանկության, բայց դրանից հետո 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում, այդ թվում՝ քաղաքներում, գործընթացը կիրակացվի պարտադիր անկանխիկ եղանակով, իսկ մինչեւ 1000 բնակիչ ունեցող համայնքների բնակիչները մինչեւ հուլիսի 1-ը կունենան կամավոր ընտրելու հնարավորություն:

ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դեկտեմբերի 5-ի արտահերթ նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկվել են «Պետական նպաստների մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները: Հիշեցնենք, որ նախագծերի փաթեթի քննարկումը դեկտեմբերի 2-ի նիստում ընդմիջվել էր որոշ հարցեր ճշգրտելու նպատակով:

Օրենսդրական փաթեթն արժանացել է հանձնաժողովի հավանությանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 54 ՃՏՊ. 7 մարդ զոհվել է, 71-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«Ակբա» բանկ

ԾԱՌԱՏՈՒՆԿ

Ճանապարհի դժվարությունները դառնում են աննկատ, երբ թիմակիցդ կողքիդ է: Ակբայականները, միմյանց թեւ-թիկունք, ձեռք ձեռքի, բարձրացել են Լոռու մարզի Ջրաշեն գյուղի բարձունքները ծառատունկ իրականացնելու նպատակով:

Ջրաշենում «Ակբա» բանկի թիմը տնկել է վայրի խնձորենիներ ու սոճիներ ավելի լավ շրջակա միջավայր եւ ավելի մեծ անտառային ծածկույթ ունենալու ցանկությամբ:

Անտառների վերականգնման աշխատանքը, բնության հետ կապի ստեղծումը եւ կենսաբազմազանության պահպանությունը միավորել է «Իմ անտառ Հայաստան» կազմակերպությանն ու «Ակբա» բանկին:

Անտառվերականգնման նպատակով ստեղծված «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության տնկարաններում սերմերից աճեցվում է 15 տեսակի ծառ՝ կաղնի, թխկի, սոճի, կեչի, վայրի խնձորենի, տանձենի...

«Մեր կարեւոր արժեքներից մեկը փոխօգնությունն է, ու այստեղ հասնելն էլ փոխօգնության սկզբունքով էր: Միմյանց օգնելով՝ կարողացանք հաղթահարել այս դժվար ճանապարհը: Փոխօգնությունը բանկի հիմնարար արժեքներից մեկն է, որն այսօր եւս արտացոլվեց»,- նշում է «Ակբա» բանկի տաղանդների ներգրավման թիմ լիդեր Անի Պողոսյանը:

«Տնկում ենք վայրի խնձորենիներ, սոճիներ: Անտառներն են երկրի թոքերը, ու որքան շատ լինեն անտառներն ու կանաչ տարածքները, այնքան ավելի առողջ կլինի մեր մթնոլորտը»,- նշում է «Ակբա» բանկի մանրածախ բիզնեսի պրոդուկտների կառավարման թիմ լիդեր Մարիաննա Հովհաննիսյանը:

«Մենք ուզում ենք անտառ ստեղծել: Տնկելուց հետո պետք է այն խնամել, եւ շատ ուրախ ենք, որ ընկերությունները, ինչպես «Ակբա» բանկն է, օգնում են անտառների մեծացման հարցում: Այժմ «Ակբա» բանկը միացել է մեզ, որ միասին անտառ ստեղծենք»,- նշում է «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության հիմնադիր եւ տնօրեն Անտրէ Գումուշճեանը:

Տարիներ անց Լոռու մարզի Ջրաշեն գյուղի բարձրունքներում կլինի սաղարթախիտ անտառ, որտեղ ակբայականներից յուրաքանչյուրն իր տնկած ծառը կունենա:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԶԱԼՑԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԱՐՑԱԽԻՆ

Զալցբուրգի Փարիզ-Լոդրոնի (Ավստրիա) համալսարանի Քրիստոնյա արեւելքի հետազոտությունների կենտրոնը, որը 2013 թվականից հայագիտության հետազոտությունների նպատակով ֆինանսավորում է նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, հայագետ Յասմին Դում-Թրագուտի ղեկավարությամբ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգությանը նվիրված դրամաշնորհային առաջին մրցույթի շրջանակում հետազոտական հինգ դրամաշնորհ է տրամադրել երիտասարդ գիտնականներին: Դրամաշնորհային ծրագիրը ֆինանսավորում է Զալցբուրգի արքեոիսկոպոսական թեմը:



Կարճաժամկետ դրամաշնորհների այս ծրագիրը նպատակ ունի խթանել Արցախի (քրիստոնեական) պատմության, մշակույթի, հնագիտության, արվեստի, ինչպես նաեւ պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ երիտասարդ գիտնականների հետազոտությունները, նպաստել հայկական մշակութային ժառանգության ուսումնասիրությանը:

Խրախուսված հինգ հետազոտություններն էլ Հայաստանից են, որոնք ներկայացնում են գիտահետազոտական տարբեր հաստատություններ, ինչպես նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Դրանք են՝

-Նժդեհ Երանյան, Հայաստանի պատմության թանգարան, փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, գիտաշխատող, «Արցախի մ.թ.ա. 3-1 ին հազարամյակի սկզբի մշակույթը՝ ըստ թանգարանային նյութերի»,

-Հայր Աթանաս աբեղա Սարգսյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հռոմի պապական արեւելյան ինստիտուտ, մագիստրանտ, «Քրիստոնեական ընկալումներն արցախահայ բանահյուսության մեջ»,

-Շողակաթ Դեւրիկյան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ասպիրանտ, «Հայկական մանրանկարչության ընդհանուր օրինաչափությունները եւ տեղային յուրահատկությունները՝ Արցախում նկարազարդված Ավետարանների Տերունական պատկերներում»,

-Օվսաննա Խաչատրյան, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտաշխատող, «Արցախում գրված ձեռագրերի հիշատակարանները՝ որպես պատմամշակութային կարեւոր սկզբնաղբյուր»,

-Աշոտ Մկրյան, Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, աշխատակից, լեզվաբան, «Արցախի բարբառը Զմյուռնիայում. հանրալեզվաբանական քննություն»:

Հետազոտական նախագծերն իրականացվելու են Զալցբուրգի համալսարանի հայագիտության բաժնի հետ սերտ համագործակցությամբ եւ փորձագիտական ու գիտական խորհրդատվությամբ: Արդյունքները գիտական զեկուցումների ու հոդվածների տեսքով ամփոփվելու են հաջորդ տարեվերջին՝ նաեւ Զալցբուրգի համալսարանում: Զալցբուրգի համալսարանի հայագիտության բաժինը նպատակ ունի աջակցել երիտասարդ հետազոտողներին ու նրանց ստեղծարար գիտական նախագծերը, խրախուսել հայագիտական, ինչպես եւ մշակութային ժառանգությանն առնչվող հետազոտությունների միջառարկայնացումն ու միջազգայնացումը, նպաստել Արցախի վտանգված մշակութային ժառանգության պահպանությանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»-Ի ԴԻՆԱՄԻԿ ԱՃԸ

«Ամերիաբանկ»-ն արժանացել է Հայաստանի 2022թ. «Տարվա բանկ» մրցանակին Financial Times (FT) ընկերության համաշխարհային առաջատար ֆինանսական լրատվամիջոցի՝ TheBanker ամսագրի կողմից: «Տարվա բանկ» մրցանակաբաշխության հաղթողները հայտնի են դարձել դեկտեմբերի 1-ին Լոնդոնում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ: Հեղինակավոր մրցանակը շնորհվում է լավագույն ֆինանսական արդյունքներ ցուցաբերած եւ նորարարական բանկային լուծումներ առաջարկող ֆինանսական հաստատություններին ավելի քան 100 երկրում:

Որոշում կայացնելիս The Banker-ի հաղթողներին գնահատող միջազգային հանձնաժողովը հաշվի է առել «Ամերիաբանկ»-ի դինամիկ աճը, հիմնական ֆինանսական ցուցանիշներով վերջին տարիներին բանկի առաջատար դիրքերը շուկայում, շահութաբերության աճը, բանկին մրցակցային առավելություն ապահովող ռազմավարական նախաձեռնությունները, սպասարկման որակը: Փորձագետները կարեւորել են նաեւ բանկի հաջողությունները թվային փոխակերպման ճանապարհին, «կանաչ» պորտֆելը եւ Հայաստանում կլիմայի փոփոխության դեմ պայքարին եւ բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը:

«Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը նշեց. «Մենք հպարտ ենք, որ ստացել ենք «Տարվա բանկ» հեղինակավոր մրցանակը՝ համալրելով 2022թ. մեր ձեռքբերումների եւ մրցանակների տպավորիչ ցանկը: Մեր կորպորատիվ կառավարման ամուր համակարգը, փոփոխություններին արձագանքելու մշակույթը եւ թվային փոխակերպումն առանցքային նշանակություն են ունեցել շուկայի անհանգիստ իրավիճակը հաջողությամբ հաղթահարելու եւ թվային սերնդի հաճախորդների աճող կարիքները բավարարելու համար: Մենք կշարունակենք ներդրումներ կատարել թվային փոխակերպման եւ մարդկային կապիտալի մեջ մեր գործառնական արդյունավետությունը բարձրացնելու եւ նորարարական լուծումներով հանդես գալու նպատակով, որպեսզի դառնանք ֆինանսական եւ տեխնոլոգիական վստահելի միջավայր՝ առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ»: «Ամերիաբանկ»-ն արժանանում է «Տարվա բանկ» մրցանակին արդեն ութերորդ անգամ:

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ»

Բիզնեսի վերազինման նպատակով «Ակբա Լիզինգը» մինչեւ 31.12.22թ. առաջարկում է լիզինգով ձեռք բերել ագրոպարենային ոլորտի անհրաժեշտ սարքավորումները պետական աջակցության ծրագրով՝ սկսած 0.63% փաստացի տոկոսադրույքից:

Լիզինգի տրամադրման պայմաններն են՝ արժույթ՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում ՀՀ կառավարության սուբսիդավորումից հետո կկազմի 2.35-6.95%, արտարժույթի դեպքում՝ 0.63-6.82%:

Լիզինգը տրամադրվում է առանց տրամադրման միջնորդավճարի: Կանխավճարը 20% է (գույքի արժեքից), մարման ժամկետը՝ մինչեւ 60 ամիս:

Ծրագրի շրջանակում նույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 1 մլրդ ՀՀ դրամը:

Ապահովագրության ծախսերը հոգում է «Ակբա Լիզինգը»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊՐԵՄԻԵՐԱ

ՌՈՒՍԱԿԱՆ ՖԻԼՄ՝ «ՄԱՐԻԱ. ՓՐԿԵԼ ՄՈՍԿՎԱՆ»

«Դոմ Մոսկվի» մշակութագործարարական կենտրոնի նախաձեռնությամբ դեկտեմբերի 2-ին Երեւանում տեղի ունեցավ «Մարիա. փրկել Մոսկվան» ֆիլմի պրեմիերան՝ նվիրված Մոսկվայի ճակատամարտի 81-ամյակին:



Ֆիլմի ռեժիսոր Վերա Ստորոժեւան հիշեցրեց՝ կինոնկարը նկարահանել են մեկ տարի առաջ: Նկարահանումներն իրականացրել են ցուրտ ձմռանը Մոսկվայում եւ մեկ այլ քաղաքում: Ֆիլմն անդրադառնում է լեգենդի, որը ծնվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ռեժիսորի խոսքով՝ կան մարդիկ, որոնք հավատում են լեգենդին, բայց ոչ բոլոր պատմաբաններն են այն հավաստի համարում:

«Շատերը հավանաբար գիտեն, որ այդ ժամանակներում Մոսկվայում ապրել է մի կին՝ Մատրոնա Մոսկովսկայան: Պատերազմի ամենաողբերգական պահերին, երբ թվում էր, թե թշնամին մուտք կգործի Մոսկվա, երբ բարիկադներ էին կառուցում Մոսկվայի փողոցներում, երկրի առաջնորդ Իոսիֆ Ստալինն այցելել է Մատրոնա Մոսկովսկայային, եւ նա Ստալինին ասել է՝ ինչ անել»,-պատմեց ռեժիսորն ու նշեց, որ Մատրոնային մարմնավորել է դերասանուհի Օլգա Լապշինան:

Լապշինան էլ հավելեց՝ մարդիկ Մատրոնա Մոսկովսկայայի մոտ են եկել ծանր պահերին օգնություն խնդրելու, խորհուրդ հարցնելու:

«Այս կինոնկարով հորդորում ենք կյանքից վերցնել այն, ինչը կարող է նպաստել հավատի ամրապնդմանը, ինչը կօգնի հաղթահարել այն ժամանակաշրջանը, որը ծանր է ոչ միայն մի քանի ժողովրդի, այլեւ աշխարհի համար: Ցանկանում ենք՝ մարդիկ անեն հնարավորը, որ ամեն բան ծառայի սիրուն»,-ասաց դերասանուհին:

«Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը կարծում է՝ «Մարիա. փրկել Մոսկվան» յուրահատուկ կինոնկար է:

«Ֆիլմը հայրենասիրություն է սերմանում եւ՛ երիտասարդ սերնդի, եւ՛ մեծահասակների շրջանում, իսկ հայրենասիրական դաստիարակությունն անմիջականորեն ազդում է յուրաքանչյուր երկրի անվտանգության վրա: Վստահ եմ՝ նման կինոնկարներ դիտելով՝ հանդիսատեսը կզգա սերը, որը տածում է իր հայրենիքի հանդեպ»,- նշեց Կարապետյանը: Նա ընդգծեց, որ դեկտեմբերի 1-ը նման ֆիլմերի ցուցադրության համար խորհրդանշական օր է, քանի որ մարշալ Հովհաննես Բաղրամյանի ծննդյան օրն է: Այս տարի նշվում է նրա 125-ամյակը: Հոբելյանի կապակցությամբ կենտրոնն առաջիկայում մարշալին նվիրված ցուցահանդես է բացելու, կլոր սեղան-քննարկում է նախաձեռնելու, որին մասնակցելու են նաեւ մարշալ Բաղրամյանի հարազատները:

«Մարիա. փրկել Մոսկվան» ֆիլմի հերոսուհին կրտսեր լեյտենանտ Մարիա Պետրովան է: Նրա ճակատագրում ասես արտացոլվում է երկրի ճակատագիրը: Լինելով քահանայի դուստր՝ նա հրաժարվում է հորից եւ հավատից, բայց հենց նրան էր վիճակված Մոսկվայի պաշտպանության սարսափելի օրերին օկուպացված տարածքից բերել հրաշագործ սրբապատկերը:

Ըստ լեգենդի՝ հենց այդ սրբապատկերը պետք է փրկի մայրաքաղաքը: Հերոսուհին անցնում է ծանր փորձությունների միջով, կորցնում իր ջոկատի բոլոր զինվորներին, իր սիրելիին: Չնայած այդ ամենին՝ նա չի կորցնում ապրելու հույսը:

ՎԱՐԿԱԾՆԵՐ

ՈՐՏԵ՞Ղ Է ԳՏՆՎՈՒՄ ԵՐԳՉՈՒՀԻՆ

90-ական թվականների հայկական շոուբիզնեսի երբեմնի կարկառուն դեմքերն այսօր այնքան էլ ակտիվ ստեղծագործական գործունեություն չեն ծավալում. ոմանք զբաղվում են բիզնես գործունեությամբ, իսկ ոմանք էլ պարզապես ժամանակի հոսքի հետ չեն հասցնում շարժվել: Հանրությանն ամենաշատը հետաքրքրում է, թե ուր է եւ ինչու անհետացավ երգչուհի Անահիտ Մանուկյանը:

ArmLur.am-ը փորձեց կապվել երգչուհու մտերիմների հետ՝ պարզելու համար, թե ինչ տեղեկություններ ունեն նրա մասին:

Նրա ժամանակակից երգչուհի Ժաննա Քոչարյանն ասաց, որ Անահիտ Մանուկյանը մեր հայկական էստրադայի լավագույն երգչուհիներից մեկն էր. «Ես ցավում եմ, որ նրանից լուր չունեմ եւ տեղյակ չեմ, թե նա ինչով է զբաղվում եւ ինչու այսպես գնաց»:

Երգչուհի Էմմա Պետրոսյանը մեզ հետ զրույցում ասաց՝ որքան տեղյակ է, նա ապրում է Հոլանդիայում, սակայն այլ տեղեկություններ նրա մասին չունի: Նշենք, որ զանգահարում էր միայն երգչուհի Էմմա Պետրոսյանին, սակայն տարիներ անց այդ զանգերն էլ էին դադարել:

Իսկ թե ուր եւ ինչու անհետացավ հայկական երգարվեստից, հայրենիքից երբեմնի ճանաչված եւ սիրված երգչուհի Անահիտ Մանուկյանը, այդպես էլ անհայտ է:

Միայն մամուլում հրապարակված լուրերից հայտնի է, որ Անահիտն ամուսնացած էր, երբ հերթական անգամ մեկնել էր Հոլանդիա. ամուսնուն զանգահարել եւ ասել էր, որ այլեւս չի վերադառնալու: Անահիտը եւ ամուսինը երեխաներ չունեին, ի վերջո, այդպես էլ ամուսնալուծվել են:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ Անահիտը Հոլանդիայում հայտնվել էր հոգեբուժարանում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ «ԱԼ ՆԱՍՐԸ»

Պորտուգալիայի հավաքականի 37-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն հունվարի 1-ից կներկայացնի Սաուդյան Արաբիայի «Ալ Նասր» ակումբը:

Սաուդյան Արաբիայի թագաժառանգին պատկանող ակումբը Ռոնալդուի հետ կկնքի 2,5 տարվա պայմանագիր՝ տարեկան մոտ 200 միլիոն եվրո վարձատրությամբ, որը կներառի նաեւ գովազդային արշավներից եկամուտը:

Ռոնալդուն առաջատար եվրոպական ակումբներից ոչ մի առաջարկ չի ստացել, թեեւ ցանկություն է ունեցել հանդես գալ Չեմպիոնների լիգայի փլեյ-օֆֆում: Անցած ամիս Ռոնալդուն ու անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» խզել էին պայմանագիրը, որը նախատեսված էր մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ

Իտալիայի չեմպիոն «Միլանը» կերկարաձգի պայմանագիրն աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Օլիվիե Ժիրուի հետ աշխարհի առաջնությունից հետո:

36-ամյա ֆուտբոլիստը դեմ չէ համագործակցության երկարաձգմանը: Նրա գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

Ժիրուն 2021 թվականին է միացել «Միլանին», որի հետ անցած մրցաշրջանում դարձավ Իտալիայի չեմպիոն: Միլանյան թիմում անցկացրած 57 խաղում նա խփել է 23 գոլ, կատարել 9 գոլային փոխանցում: Ֆրանսիայի հավաքականը աշխարհի առաջնության 1/8 եզրափակչում Ժիրուի գոլի եւ ՊՍԺ-ի 23-ամյա հարձակվող Կիլիան Մբապեի դուբլի շնորհիվ 3:1 հաշվով հաղթել է Լեհաստանի թիմին եւ քառորդ եզրափակչում կմրցի անգլիացիների հետ:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

Աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դիդիե Դեշամը մեկնաբանել է 3:1 հաշվով հաղթանակը լեհերի նկատմամբ աշխարհի առաջնության 1/8 եզրափակիչում: Այդ խաղում 2 գոլի եւ 1 գոլային փոխանցման հեղինակ էր դարձել Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 23-ամյա հարձակվող Կիլիան Մբապեն:

«Ֆավորիտի կարգավիճակում մենք կարող էին հաղթահարել խմբային փուլի արգելքը, բայց դա անել փլեյ-օֆֆում ավելի լավ է: Մենք ունենք մի քանի օր հանգստանալու եւ քառորդ եզրափակիչին պատրաստվելու համար, իսկ հիմա պետք է վայելել այս հաղթանակը:

Մբապեն հիմա աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է: Իհարկե, ես ֆրանսիացի եմ եւ նրա մարզիչը, բայց այդպես եմ կարծում: Նա հատուկ պատրաստվել է այս առաջնությանը: Նա բացառիկ ֆուտբոլիստի որակներ ունի: Նա կարողանում է հանդիպման ընթացքում փոխել իր խաղը»,- ասել է Դեշամը:

Քառորդ եզրափակիչում Ֆրանսիայի հավաքականը դեկտեմբերի 10-ին կմրցի Եվրոպայի փոխչեմպիոն Անգլիայի հետ:

● *Դեկտեմբերի 8-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Ջուր կուգա...» համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝ 1000-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հյութերի դրոշմավորման համար ձեռք բերված դրոշմապիտակները կորցնելու դեպքում ի՞նչ պատասխանատվություն կարող է առաջանալ:

Հմայակ Մալխասյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9.6-ի 5-րդ կետի համաձայն՝ չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը նշված հոդվածով սահմանված ժամկետներից ուշացնելու, նշված հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում հարկային տեսչությունների կամ մաքսատների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը եւ տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքում 9.2-րդ հոդվածով սահմանված են ՀՀ-ում արտադրված եւ ՀՀ ներմուծված շշալցված կամ ցանկացած այլ ձեւով տարայավորված այն ապրանքների ցանկն ու ԱՏԳ ԱԱ ծածկագրերը, որոնց օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը 2013թ. հուլիսի 1-ից պարտադիր է: Այդ ցանկում թանը ներառված չէ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը:

Կոմիտաս Առաքելյան (61 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝

- նշանակել կենսաթոշակ,
- նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,
- մերժել կենսաթոշակ նշանակելը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Մանկական եվրատեսիլ 2022-ի» բեմը, ինչպես եւ խորհրդանիշը կառուցված են հրաշքի շուրջ: Կենտրոնական բեմը նման է հոլի, իսկ նրա շուրջ լույսով թելերն են, որոնք փոխանցելու են յուրաքանչյուր ելույթի էներգիան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: